բաղկացած գիւղացիների մի բազմութիւն, որոնք բոլորն էլ զինված էին բրիչներով, բահերով և թիակներով։ Նորանց միջին երբեմն երբեմն երևում էր մի Եւրոպական կառք։

«Այդ ի՞նչ բան է», հարցրի առաջնորդիցս։

—«Այդ խանն է, որ ճանապարհորդում է», պատասխանեց նա։

Բանից երևաց, որ խանը Տփխիսում կառքով մանգալը շատ է հաւանել, և դոցանից մինը գնելով Մագու իւր հետն է տարել և ճանապարհորդում է, բայց որովհետև շինուած ճանապարհներ չ'կան, խանը ամեն գիւղից «օլամ-չէք» (տարապարհակներ) է հանում և այն տեղեր, ուր երկրի պատառուածքները փոքր են լինում, խանը հրամայում է «տոլդուրուն» (լցրէք), իսկոյն բրիչ բահը գործ է դրվում, փոսը լցվում և խանի կառքի անիւները գլորվում են վերայից. իսկ ուր որ խրամատը մեծ է, երկար ժամանակ է հարկաւոր լցնելու, հաւասարելու նորան, խանը հրամայում է «գալդրրրն» (վերցրէք), իսկոյն բազմութիւնը բարձրացնում է խանին և նորա կառքին անցկացնելով խրամատի միւս ափը։

Այդպէս, բարձրապատիւ խանը «տոլդուրուն»ով և «գալդրրրն»ով անցնում է Մագուայ խանութեան մի ծայրից միւս ծայրը, աւելի ճիշտ ասել, խանը բարեհաճում է իւր կառքով և